

ՅԱՆՈՐԱՅԻՆ ՊՐՈՓ. Յ. Ազգերու պատմութիւն. Ա. հատոր. Արեւելեան հին ազգեր եւ Յունաստան: Պատկերազարդ բարձրագոյն դասընթացը: Գ. Պոլսո, տպ. Նշան Պապիկեան. 1911, 80, էջ 264: Գինը՝ 8-50 դր:

Զբոսարկէս կ'որոշուենք Պրոֆ. Յակոբեանի գեղեցիկ ձեռնարկութեան առաջին հատորը: Պատմութեան դասագիրքներ շատ տեսած ենք. բայց ոչ միջակից մը Յակոբեանի առաջիկայ հատորին, որ իւր մեծ յաջողութեամբ բաշտակալ կ'ընէ յաջորդ հատորներու ալ փութով հրատարակութիւնը:

Արեւելեան հին ազգերու պատմութիւնը՝ հետեւողութեամբ նորագոյն West, Munro, Robinson եւն. քննիչներու՝ քննարկած է հեղինակն ալ ամենատեղի վերջու մէջ, բայց մի եւ նոյն ժամանակ նաեւ գարոյի աշակերտաց դիրքաւոր յորինածութեամբ. պատմութեամբ, յորինածութիւն եւ ծաւալ իրարու գիրկընդ խառն են: Դասաւանդութիւնն եւ ուսումը զգալի կերպով կը հեշտացնեն նաեւ նիւթին համապատասխան պատկերները, որոնք առնուած են նորագոյն հրատարակութիւններէ:

Ա. Հատորին մէջ ընդարձակագոյն տեղի կը գրաւեն մասնաւորապէս Եգիպտացիք եւ յոյները. բայց ունին ուրոյն տեղ նաեւ Եփրատի եւ Տիգրիսի հովիտը բնակող Ժողովուրդք, որոնք Հայաստանի հետ մշակական յարաբերութեան մէջ էին:

Պիտի բաղձայինք որ Դասագիրքս մուս գտներ ազգային ամեն վարժանաց մէջ, իբրեւ ամենայնոյն իւր տեսակին մէջ:

Հ. Յ. ՏԵՐ-ՄԱՐԳԱՐԻԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՆՑ Կ. Հայագիտութիւնն արեւմտեան Եւրոպայում. համառոտ տեսութիւն եւ զբացում: Տիգրիս, տպ. Ն. Աղանեան, 1910, 80, էջ 48-184: Գինը՝ 1 դր:

Դրուատեք միայն կրնաք ներկայացնել մեր ընթերցողներուն Պ. Գոստանեանցի այս աշխատութիւնը:

Հեղինակին նպատակն եղած է հոս տալ ամփոփ տեղեկութիւն մը Եւրոպացի մասնեագրաց քով Հայաստանի ստացած նշանակու-

թիւնը, կամ եւրոպական գրականութեան մէջ Հայ անուն գտած յարգանքը:

Ընդարձակ ներածութեամբ (էջ Դ—ԼԻ) պատկերացուցած է Ժ.Գ.—Ի գար Հայաստանի վրայ գրուած աշխատութեանց արժեքը՝ հայ պատմութեան, աշխարհագրութեան, լեզուի եւն. համար, որ սիրով եւ օգտակարապէս կը կարգացուի:

Բուն գործն այսու բնական կարգաւ պարզ ցուցակ մ'է՝ առանց բաժանման նիւթի:

Բնականաբար փոքրիկ ծաւալէս չի կրնար յուսացուիլ կատարել գործ մը. պահանջ մը, որ ընդարձակ հատոր մը կ'ենթադրէ: Ոչ միայն ամբողջական չէ ընթացած ցանկը, այլ եւ ոչ ծանօթ հրատարակութեանց քառորդն կը ներկայացընէ, մանաւանդ եթէ գտանք այն ընդարձակ ծրագրող համաձայն, ուր թեւակոխած է գործս:

Աւելորդ է այս տեղ օրինակով խօսիլ. բաւական է ակնարկ մը միայն Գեծ. Հ. Պ. Ֆեր-հաթեանի կազմած ցանկին վրայ (հմտ. Հնդ. Ա. 1911, Թ. 1—9), որ գեւ միայն 15 տարուայ ընթացքը կ'ընդգրկէ:

Հ. Ն. Ա.



Contes et Légendes de l'Arménie, traduits et recueillis par Fr. Macler, Préface de René Basset, Paris, E. Leroux, 1911, 8°, p. XV—196. Prix: Fr. 3.—

Petite Bibliothèque Arménienne շարքին

երրորդ գրքիցը կը կարճէ առաջիկայ հատորը. ուր եռանդուն հայաւերն Գր. Մակէր կու տայ 34 հատուած՝ հայկական զրոյցներ (Թարգմանութեամբ մասնաւորապէս Սրբաւանդ-նոյն, Հ. Մ. Հաւանի հաւաքումներէն) եւ այլ աւելորդապաշտական կտորներ, զորոնք լսած է իր վերջին ճանապարհորդութեան ժամանակ յԱրեւելոյ: Ըստ հետաքրքրական հառաւանքի են ընդհանրապէս ներս առնուածները: Գեղեցիկ է եւ Բաւալ-Քալի հանրածանօթ Ռեւի Բալի գրէն, ուր ցոյց կը արուի հայկական զրոյցներու եւ նմանեանց աղբիւր արար գրականութեան հետ:

Հ. Ն. Ա.



ՀԻՄՆԱԿԱՆԻ ԵՒ ՊԱՆԿԱՆԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԱՐԱԳԻՐ Հ. ՌԱԳԱՅԵԼ Կ. ՊԱՐՈՆՅ

ՎԵՆԵՆԱ, ՄԻԽԱԵԼԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ